



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ  
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

25 մայիսի 2017 թվականի N 22

36. ՈՌՈԳՄԱՆ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԶՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱ-  
ԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՇՎԻ ԱՌՆՈՂ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ  
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հավանություն տալ ոռոգման ջրամատակարարման ոլորտում ջրի փաստացի օգտագործումը հաշվի առնող կառավարման հայեցակարգին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին՝ 6-ամսյա ժամկետում մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել միջոցառումների ծրագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. հունիսի 7  
Երևան



## Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

### ՈՌՈԳՄԱՆ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԶՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՇՎԻ ԱՌՆՈՂ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

#### I. ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄԻՆԸ

1. «Ոռոգման ջրամատակարարման ոլորտում ջրի փաստացի օգտագործումը հաշվի առնող կառավարման» հայեցակարգի (այսուհետ՝ հայեցակարգ) նախագիծը մշակվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից:

#### II. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2. Սույն հայեցակարգում ներկայացվում է Հայաստանի Հանրապետությունում ոռոգման ջրի փաստացի օգտագործված ծավալներին համարժեք հողօգտագործողների կողմից վճարումների ապահովման մեխանիզմները:

3. Հայեցակարգը հիմնականում անդրադառնում է՝

1) ջրօգտագործողներին մատակարարվող ջրի ծավալի հաշվառման տարբերակների առաջադրմանը.

2) ջուր մատակարարող և ջուր սպառող սուբյեկտների միջև պայմանագրային հարաբերությունների կատարելագործմանը.

3) գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող համայնքներում ջրօգտագործողների կողմից նորմատիվային ջրօգտագործումից ավել փաստացի ջրօգտագործված ծավալի փոխհատուցմանը:

#### III. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

4. Հայեցակարգը մշակվել է ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1060-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 1.2 կետի «Գյուղատնտեսություն» բաժնի 1) ենթակետի պահանջների:

5. Հայեցակարգի մշակումը պայմանավորված է հանրապետությունում ոռոգման ջրի փաստացի օգտագործված ծավալներին համարժեք հողօգտագործողների կողմից վճարումների, ինչպես նաև բնագավառում կորուստների կրճատման ապահովման մեխանիզմներով:

6. Հայեցակարգի հիմնական նպատակն է՝

1) ոռոգման ջրամատակարարման ոլորտում ջրատրման հանգույցներում ջրաչափի բացակայության ժամանակ ջրամատակարար և ջրօգտագործող հարաբերություններում մատակարարված ջրի հաշվառման այլընտրանքային տարբերակների կիրառումը.

2) պայմանագրային հարաբերություններում իրավունքների և պարտավորությունների հստակեցումը:

#### **IV. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

7. Ոռոգման ջրամատակարարման ոլորտում ջրի փաստացի օգտագործումը կարգավորվում է ՀՀ ջրային օրենսգրքով, «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N2121-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի նիստի N33 կետով հավանության արժանացած արձանագրային որոշմամբ:

8. Վերը նշված իրավական ակտերը կարգավորում են՝ ոռոգման համակարգի կառավարումը, ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեության հիմունքները, ինչպես նաև պետական և այլ մարմինների հետ դրանց փոխհարաբերությունների սկզբունքները, մասնավորապես, ոռոգման ջրի մատակարարման պայմանագիրը և այլն, մատակարարված ջրի ծավալի հաշվառումը, միաժամանակ սույն հայեցակարգի 2-րդ գլխում ներառված խնդիրները կարգավորվում են մասամբ, ոչ լիարժեք:

#### **V. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ**

9. Ոռոգման ջրամատակարարման ծառայությունների որակը բարելավելու համար նպատակ է հանդիսանում ջրօգտագործողների ընկերություն և ջրօգտագործող հարաբերությունների, ըստ առանձին գործառույթների և ենթագործառույթների հստակեցման օրենսդրական բարեփոխումները, մասնավորապես, մատակարարված ոռոգման ջրի երկկողմանի (ջրօգտագործողների ընկերություն և ջրօգտագործող) մատչելի, վստահելի, արժանահավատ հաշվառումը:

10. Ոլորտում մատակարարված ոռոգման ջրի հաշվառման գործընթացը՝ ջրօգտագործողների ընկերություն և ջրօգտագործող իրավահարաբերություններում պետք է իրականացվի համակարգում, մասնավորապես, սահմանազատման կետերում ջրաչափական սարքերի միջոցով (որոնց հագեցվածությունը համակարգում 15% է, որից միայն 3%-ն է արդի): Համաշխարհային բանկի միջոցներով ոռոգման համակարգի ջրառի և ջրանցքների հանգուցային, բաժանարար կետերում տեղադրվել են թվով 79 ջրաչափական սարքեր: Ներկայումս ուսումնասիրված մայր ջրանցք-ներտնտեսային ցանց բաժանարար կետերում նախատեսվում է տեղադրել շուրջ 2100 ջրաչափական սարքավորումներ, որոնք միացնելով SCADA (Supervisory Control And Data Acquisition-կարգավարական/դիսպետչերական հսկողություն և տվյալների ձեռքբերում) համակարգին, հնարավորություն կընձեռեն առցանց հսկողություն իրականացնել ջրի տեղաշարժի, առաջացող կորուստների, վթարների, ինչպես նաև համակարգում առաջնահերթ ներդրումային միջոցառումների անհրաժեշտության նկատմամբ:

11. Ոռոգման ոլորտի առաջին փուլի բարեփոխումների ընթացքում ձեռք բերված փորձառության արդյունքում պետք է վերանայել գործող պայմանագրերի օրինակելի

ձևերը, կատարելագործել դրանք՝ նպատակ ունենալով առավել հստակեցնելու կողմերի իրավասություններն և պարտավորությունները:

12. Գործող պայմանագրերով ջրօգտագործողների ընկերությունները հիմնականում ստանձնում են պարտավորություններ՝ ապահովելու ջրօգտագործողներին կայուն ջրամատակարարում՝ անկախ ոռոգման ջրի ծավալի բավարար լինելու և տվյալ հողատարածքը սպասարկող ոռոգման համակարգի առկայության հանգամանքներից, որը ոռոգման սեզոնի ինտենսիվ ջրամատակարարման շրջանում հանգեցնում է տվյալ և հարակից հողատարածքների ջրամատակարարման ընդհատում և այլն:

13. Գերնորմատիվային և նորմատիվային հողատարածքներ մշակող ջրօգտագործողների ֆինանսական պայմանների իրավահավասարություն՝ գերնորմատիվային ջրօգտագործումից առաջացած լրացուցիչ հասույթի նվազեցման միջոցով:

14. Հայաստանի Հանրապետության 70 համայնքների շուրջ 23000 հեկտար հողատարածքներ համարվում են գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող և օգտագործում են նորմատիվային ջրապահանջարկի համեմատ երեք անգամ ավելի ջուր, որը ջրօգտագործողների մոտ ձևավորվում է հասույթ, որի թերվճարման արդյունքում ձևակերպվում է պարտք և տարիների ընթացքում դառնում անհուսալի:

## **VI. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ**

15. Սույն հայեցակարգի 4-րդ գլխում ներառված նպատակներին հասնելու համար՝

1) մատակարարված ոռոգման ջրի հստակ հաշվառում իրականացնելու նպատակով ջրամատակարարման համակարգերում անհրաժեշտ է ջրառի կետերը, մայր ջրատարներից մինչև ներտնտեսային ցանցի բաժանարար հանգույցները՝ մինչև 2019 թվականի ոռոգման շրջանի սկիզբը, հագեցնել (<< պետական բյուջեի և/կամ միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ) ժամանակակից ջրաչափական սարքերով (նախնական հաշվարկներով շուրջ 2100 ջրաչափեր), դրանք միացնելով SCADA համակարգին, ինչը հնարավորություն կընձեռի առցանց հսկողություն իրականացնել ջրի տեղաշարժի, կորուստների և համակարգում գրանցված վթարների նկատմամբ.

2) այն վայրերում, որտեղ տեղադրված չէ և հնարավոր չէ ջրերի հաշվառումն իրականացնել ստացիոնար ջրաչափի ջրաչափությամբ, կարելի է ոռոգման ջրի հաշվառումը իրականացնել ՋՕԸ-ջրօգտագործող համաձայնությամբ՝ շարժական ջրաչափի կիրառմամբ, կա՛մ ՊԻ սկզբունքով աշխատող հոսքաչափի կիրառմամբ, կա՛մ առաջնորդվել գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմերն ու ռեժիմները սահմանող ձեռնարկով: Ձեռնարկը մշակվել է 2007 թվականին և ագրոկլիմայական փոփոխություններով պայմանավորված կորցրել է իր արդիականությունը՝ անհրաժեշտություն առաջացնելով վերամշակելու այն մինչև 2018 թվականի ոռոգման շրջանի սկիզբը.

3) պայմանագրային հարաբերություններում իրավունքների և պարտավորությունների հստակեցման նպատակով նոր օրինակելի պայմանագրի ձևի մշակման համար անհրաժեշտ է մինչև 2018 թվականի ոռոգման շրջանի սկիզբը ունենալ համապատասխան օրենսդրական հիմքեր.

4) օրենսդրության ստեղծում՝ մինչև 01.09.2018 թվականը ապահովել համապատասխան օրենսդրության ստեղծում, որով հնարավորություն կընձեռնվի

ջրօգտագործողներին մասնագիտական խորհրդատվության ծառայություն մատուցելու՝ հող-մշակաբույս ճիշտ համադրելիությունն ապահովելու համար, ինչպես նաև ստեղծել արտոնյալ, խրախուսական պայմաններ կաթիլային ոռոգման կամ այլ նոր տեխնոլոգիաների կիրառման համար, որը կբերի գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ջրախնայողության:

## VII. ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Հայեցակարգի առավելություններն են ոռոգման ոլորտում ներգրավված անձանց իրավաբանական և ֆիզիկական հարաբերությունների օրենսդրորեն ամրագրումը: Ներկայումս ջրօգտագործողների ընկերությունները իրավորեն ունեն պարտավորություններ, բայց նույնիսկ հողօգտագործողներին և ֆերմերներին խորհրդատվական իրավունք չունեն, ինչի հետևանքով հաճախակի են այն դեպքերը, երբ ջրօգտագործողների կողմից փորձ է արվում իրացնել և մշակել ոչ ոռոգելի հողատարածքներ, որտեղ բացակայում են ոռոգման ջրամատակարարման ենթակառուցվածքները կամ ջրօգտագործողների կողմից իրականացվում է հողի տվյալ տեսակի համար ոչ բնորոշ մշակաբույսերի ցանքս, իսկ ջրօգտագործողների ընկերությունները պետք է ապահովեն բավարար ոռոգման ջրով: Նշվածը բերում է առաջին դեպքում ոռոգման ջրամատակարարման անհաղթահարելի խոչընդոտների, իսկ երկրորդ դեպքում՝ գերնորմատիվայինից բարձր ջրամատակարարման, դրան համաատասխան գերհասույթի ձևավորման և ջրօգտագործողի կողմից ոռոգման ջրի դիմաց չվճարման հիմնավորման արդարացված գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի կտրուկ բարձրացմամբ: Ներկա դրությամբ արդեն իսկ կարելի է իրականացված համարել ոռոգման բարեփոխումների առաջին փուլը, իսկ երկրորդ փուլը պետք է սկսել «Ոռոգման ջրի մասին» ՀՀ օրենքի մշակմամբ, ընդունմամբ և կիրարկմամբ: Օրենքն այն իրավական հիմքն է, որով ամրագրվում են անձանց իրավունքները և պարտականությունները: Տվյալ դեպքում ջրօգտագործողների ընկերություններին ի լրումն ոռոգման ջրի մատակարարման իրենց պարտականությանը կտրվի իրավունք, որի շրջանակներում ընկերությունը կպահանջի ջրօգտագործողից հողօգտագործումը հողատարածքում իրականացնել տվյալ հողատեսքի կազմին համապատասխան: Առաջին հայացքից թվում է, որ նոր մոտեցումները կսահմանափակեն հողօգտագործողների և ֆերմերների իրավունքները մշակաբույսի ընտրության հարցում, սակայն դրան զուգահեռ պետք է նկատել, որ իրականացնելով ճիշտ հողօգտագործում և ջրօգտագործում, նրանք կունենան շուկայում առավել մրցունակ գյուղմթերք: Եթե հողագործը հող-մշակաբույս անհամադրելիությունը հաշվի չառնելով կցանկանա տվյալ տարածքի վրա մշակել հենց իր ընտրած մշակաբույսերի տեսակը (նույն արմատակազմով և ջրապահանջով), ապա այդ դեպքում իր կողմից պետք է իրականացվեն ջրախնայողության՝ կաթիլային ոռոգման կամ այլ նոր տեխնոլոգիաներով ոռոգում:

17. Այս օրենքով պետք է ամրագրվեն ջրօգտագործողների ընկերություն և հողօգտագործող/ֆերմեր իրավահարաբերությունները, կիստակեցվի հանրապետության գյուղատնտեսության զարգացման խնդրում ոռոգման ջրի դերակատարությունը, ինչն էլ կբերի՝

- 1) ջրային և հողային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման,
- 2) նոր ոռոգելի հողատարածքների ավելացման,

3) ոռոգման կազմակերպությունների ֆինանսական կայունության երաշխիքների ձևավորման:

## VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

18. Հայեցակարգով առաջարկվող լուծումների ֆինանսական գնահատականը հնարավոր կլինի տալ հաշվառման համակարգի կատարելագործման արդյունքում, երբ կունենանք հաշվառվող ջրի ծավալների և հասույթների մեծացում, ինչպես նաև գանձման տոկոսի բարձրացում, արդյունքում ջրօգտագործողների ընկերություններում կունենանք ֆինանսական կայունության աահովում:

## IX. ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

19. Հայեցակարգի դրույթները պետք է հիմք հանդիսանան ոռոգման ջրի մատակարարման և դրան հարակից ոլորտներում ներառված անձանց իրավահարաբերությունների օրենսդրորեն կարգավորմանը, որի կիրառությունը կբերի բնագավառում առկա, ինչես նաև սույն հայեցակարգում ներառված խնդիրների կանոնակարգմանը:

